



26 (181). ԹՈՒՐ-ԿԵՄԱԿԻՆ

Օր մե, Յոհան Օձնեցին պատարագի վախտ կօրնե ու վըր սեղ-  
նին կը դնե արարներու Ալի խալիֆի թուր: Էդ թուր էրկնից չիջած  
կէղնի, կովի վախտ կը ճեվա<sup>1</sup> կը հասնի զարկե, կը մեռցու զդուշ-  
ման: Ալին ըզրա զորութենով շատերուն կը շոքըցու, ժամանակ մե  
չետե՝ կը բերե կիտա Յովան Օձնեցուն, ըզի լե կիտա թագավորին<sup>2</sup>,  
թագավոր դուզե թալե ծով, օր ուր մեռնելուց չետե ուր իրեք տղեկ-  
ներու մեջ խոովութեն շընկնա: Մեծ ու միջնեկ տղեկներ կը խաբին  
զթագավոր, շը թալին, մինակ պղտիկ տղեն կը տանե թալե ծով,  
օր կը թալե՝ ծով կը խառվի չիրար, կէռա, չետե կամաց-կամաց  
գիջնա, կը հանդարտի:

<sup>1</sup> Երկարել (Մ. Բ.):

<sup>2</sup> Պատմողը՝ հուրա բողնուտ գյուղացի Ռաջոն, շասաց ո՞ր թագավորին կամ  
ո՞ր ծովը (Մ. Բ.):

